«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Սվետիկ Եփրեմյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջն. դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Թեման՝ Խոսքային հաղորդակցում

Հարցը՝ Ինչպե՞ս զարգացնել խոսքային հաղորդակցումը կրտսեր դպրոցականների մոտ:

Բովանդակություն

Ներածություն..... 4
Գլուխ1 7
Խոսքային հաղորդակցում 7
Գլուխ 2 15
Խոսքային կամ ոչ խոսքային հաղորդակցություն:..... 15
Եզրակացություն 22
Օգտագործված գրականության ցանկ 23

Ներածություն

Հայ ուսուցիչը, հատկապես այս օրերին, պարտավոր է ծավալել բարձրարժեք գործունեություն։ Նա ազգի պահապանն է, հայրենիքի նկատմամբ սիրո սերմնացանը։ Հայ ուսուցչով է պայմանավորված հայ մանուկների հայեցի դաստիարակությունը, ուրեմն՝ մեր ժողովրդի գոյատևման գրավականը։

Նորօրյա ուսուցիչը պետք է առաջնորդվի երկու կարևոր դիրքորոշմամբ.

*չկա մեթոդական ճշմարտություն,

*աշխատանքի արդյունքն արդյունավետ է ոչ թե այն ժամանակ, երբ դասարանն է յուրացրել նյութը, այլ յուրաքանչյուր աշակերտը։

«»«Յուրաքանչյուր երեխայից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուր երեխային՝ ըստ պահանջմունքների. . . » կարգախոսը միշտ պետք է ուղեկցի ուսուցչին։

Այսօր տարրական դպրոցը զարգացման որակական փուլ է ապրում։ Առաջին պլան է մղվել կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը, կայացումը, նրա գիտակցության և կարողությունների զարգացումը։ Հանրակրթական պետական չափորոշիչը սահմանում է տարրական դպրոցի սովորողի

- մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը,
- լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը,
- աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը,
- բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը, *բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիականև ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը,
- միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը։

Պետական չափորոշիչը այս նպատակների համապատասխան սահմանում է նաև այն հիմնական կարողություններն ու հմտություններնը, որոնք անհրաժեշտ է ձևավորել կրթության տարրական փուլում։Տարրական կրթությունը դպրոցի առաջին

աստիճանն է, որը նախանշում է նրա հաջորդ աստիճանները. այստեղ են դրվում և կրթության բովանդակության հաջող յուրացման, և սովորողի անձի հետագա ձևավորման հիմքերը:

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը կարևորում են աշակերտների խոսքի զարգացումը, մասնավորապես հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրները: Առարկայի նպատակն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Կապակցված խոսքի կառուցման հմտությունների ձևավորումը, բառապաշարի հարստացումը, արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Տարրական դասարաններում մայրենիին հատկացված ժամաքանակից՝ իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացվել է աշակերտների խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցում»:

Ակնկալվում է, որ հետևողական և նպատակասլաց ջանքերի արդյունքում տարրական դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա.

- հայերենով հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը,
- կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր,
- տրամաբանական եզրակացություններ անել պատճառահետևանքային կապերի վերաբերյալ,
- սովորել և սովորեցնել, տիրապետել սովորելու հիմնական հմտություններին,
- ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել, ճիշտ գնահատել իր հնարավորությունները,
- կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախաձեռնող,
- գիտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը, հարգել և ընդունել ընտանեկան և հասարակական կյանքի արժեքները,

- իմանալ իր իրավունքներրն ու պարտականությունները, պատասխանատու լինել իր արարքների համար,
- ցուցաբերել հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն, զուսպ վարք,
- ունենալ համարժեք ինքնագնահատական։

Խիստ կարևորում են աշակերտի սովորել ովորելու և հաղորդակցական կարողությունները։ Ուսոցչի կարևորագույն խնդիրն է՝ սովորել սովորեցնել։ Ուսուցման գործընթացում յուրաքանչյուր ուսուցիչ գիտակցորեն կատարում՝ իր քայլերը՝ համոզված, որ ինքը ճիշտ ուղու վրա է։ Դրա համար ուսուցիչը ոչ միայն պետք է տեղյակ լինի առարկայի դասավանդման մեթոդիկայի բոլոր նորություններին, այլև համեմատի, հակադրի այն մեթոդները, որոնք առաջադրվում ենիրեն, կամ ինքն է ընտրում իր համար, հասկանա իր կատարած յուրաքանչյուր քայլի նպատակահարմարությունը։

Գլուխ1

Խոսքային հաղորդակցում

Լեզուն, խոսքը հասարակական-պատմական զարգացման արդյունք են: Նրանում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը:Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում ՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

Հանրահայտ է՝ երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացումն իրականացվում է գործունեության մեջ, իսկ այդ գործունեության շարժիչ ուժը հաղորդակցման պահանջն է: Շրջապատողների հետ հաղորդակցման պահանջը և սոցիալականմիջավայրը երեխայի շոսքի զարգացման կարևորագույն գործոններն են:Այդ գործընթացում երեխան պասիվորեն չի ընկալում մեծերի խոսքային կաղապարները, այլ ակտիվորեն յուրացնում է խոսքը՝ որպես համամարդկային փորձի մի մաս: Այսպիսով ՝ մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է:

Մենք ապրում ենք բնության և մարդու արարած զարմանահրաշ աշխարհում, որը փորձում ենք ճանաչել, գնահատել, պահպանել, զարգացնել: Մենք նաև խոսում ենք աշխարհի և աշխարհում կատարված և կատարվող երևույթների մասին: Մենք խոսքով ներկայացնում ենք՝ ով է նա, ինչ է սա, ինչպիսին է այն և այլն: Մենք շփվում ենք, հաղորդակցվում ամենատարբեր նպատակներով: Երեխաներին էլ հասկացնում ենք, որ մայրենին սովորում են.

- ✓ պատմելու, հաղորդելու, ասելու,
- ✓ ուրախությունը կամ տխրությունը կիսելու,
- ✓ օգնություն խնդրելու, կամ օգնություն առաջարկելու,
- ✓ խորհուրդ հարցնելու, կամ խորհուրդ տալու,
- ✓ համոզելու, ազդելու, ներգործելու և այլն:

Մարդուն հետաքրքրում է, և նա խոսում է նաև այն մասին, թե ինչ և ինչպես են անում այդ, ինչ է կատարվում, ինչպես է կատարվում և այլն։ Այս ամենը կազմում է խոսքի բովանդակությունը։

Խոսքը երեք էական հատկանիշ ունի.

1. Խոսքի գործառույթները
2. Խոսքի նշանակությունը(դրված հարցը)
3. Կառուցվածքը և լեզվառճական միջոցները։

Ըստ գործառույթների խոսքի տեսակներն են.

1. Իրական դեպքերը, երևույթները, առարկաները, փաստերը ներկայացնող պատմողական խոսք,

2. Դեպքերի փաստերի, առարկաների, երևույթների (այսինքն ՝ իրականության) մասին մարդու մտքերը , խոհերը , եզրակացությունները ներկայացնող խոսք։

Ըստ նշանակության խոսքի տեսակներն են.

- պատմողական
- նկարագրական
- դատողական
- գնահատող

1. Պատմողական՝ որոշակի հաջորդականությամբ առարկայի գործողությունները ներկայացնելը (ինչ է, ով է, այն ինչպես է տեղի ունենում)։

2. Նկարագրական՝ առարկայի (երևույթի) համալիր հատկանիշների միաժամանակյա նկարագրություն (ով է, ինչպիսին է)։

3. Դատողական՝ տարբեր փաստերի, երևույթների, դեպքերի մեկնաբանում, բացատրում, օատճառահետևանքային կապերի բացահայտում (ինչու են այդպիսին, ինչու այդպես եղավ)։

4. Գնահատող՝ ինչ-որ բանի, ինչ-որ մեկի մասին արտահայտված վերաբերմունք, հնահատում։

Խոսք հաղորդակցություն դասերին, սկսած երկրորդ դասարանից հաճախ ենք անդրադառնում տեքստին՝ ի դեմս պատմությունների, առարկաների, հեքիաթների և այլ գրական-գեղարվեստական նյութերի։ «Խոսքային ժանրեր» բաժնում անդրադառնում ենք ոչ միայն գեղարվեստական-գրական, այլ նաև իրական

խոսքում օգտագործվող ժանրերին (խնդրանք, հրաման, հրահանգ, դիմում, նամակ և այլն)։Այս համատեքստում տեքստը դիտարկում ենք որպես խոսքային հաղորդակցման գործունեության արդյունք, անդրադառնում ենք տեքստի տեսակներին, ինչպես նաև խոսքային ժանրերին՝ որպես տեքստի տարատեսակների։

Տեքստի և նրա հիմնական հատկանիշների մասին իմացությունը օգնում է աշակերտներին արդյունավետ ձևավորել սեփական մտքերն ու խոսքը։Տարրական դասարաններում մի քանի խնդիր է լուծվում։

Երեխան պետք է,

- տարբերակի տեքստը նախադասությունների պարզ գումարից,
- իմանա և տարբերակի,

ա)տեքստի իմաստային ու կառուցվածքային հատկանիշները (թեմատիկ միասնմություն, իմաստային ամբողջություն, կապակցվածությունվերնագիր, բանալի բառեր, պարբերություն),

բ)տեքստի հիմնական կառուցվածքային-իմաստային մասերը (սկիզբ, ընթացք, ավարտ)։

Առաջին և երկրորդ դասարաններում երեխաները հասկանում և սահմանում են, որ երբ նախադասությունները կապված են իրար հետ և պատմում են միևնույն բանի մասին, դրանք դառնում են մեկ ամբողջություն, որն անվանում ենք տեքստ։Իսկ այն ինչի մասին պատմում է տեքստը, կոչվում է թեմա։ Տարաբնույթ աշխատանքներ է կատարվում նկարներով, նապխադասությունների խմբերով։

Երկրորդ և չորրորդ դասարաններում սովորում են տեքստի հատկանիշները.

1. վերնագիր (թեմա), որը հուշում է ում կամ ինչի մասին է պատմությունը, թե ինչ է տեղի ունենում (ունեցել)։
2. սկիզբ կամ առաջին նախադասություն։Պատմողական տեքստը սեվորաբար սկսվում է այնպիսի նախադասությամբ, որում ցույց է տրվում դեպքերի -ամանակը, տեղը, գործողությունները։Այն պատասխանում է ինչ, ով, երբ, երտեղ հարցերին։Օրինակ ՝ «Ժուկով ժամանակով. . . », «Օրերից մի օր. . . », «Մի անգամ ամռանը. . . »,«Մի երեկո. . . » և այլն։
3. ա) անցում հիմնական մասին, բանալի բառեր կամ արտահայտություններ։

բ) պատմելու ժամանակ օգտագործվում են մի անգամ, օրերից մի օր, հանկարծ, այդ օրերին և այլ բառեր և արտահայտություններ։

4. Ավարտ կամ վերջին նախադասություն։

Յուրաքանչյուր տեքստ ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի մասին է լինում։Դա էլ հենց տեքստի թեման է։Թեման կարող է արտահայտվել տեքստի վերնագրում։Թեման մեկն է, իսկ վերնագրերը կարող են շատ լինել։Հասկանալ տեքստը, նծանակում է հասկանալ նրա գլխավոր միտքը, գաղափարը։

Վերնագիրը արտահայտում է տեքստի հիմնական թեման կամ հիմնական իմաստը, բովանդակությունը։ Վերնագիրը գրքի, հեքիաթի, պատմությանն այցետոմսն է, ցուցանակը, առաջին ծանորությունը, Այն օգնում է գլխի ընկնել տեքստի բովանդակության մասին։Հարմար վերնագրեր են առածներն ու ասացվածքները, որոնց մեջ ամփոփված է ամբողջ պատմությունը։

Երրորդ և չորրորդ դասարաններում երեխաներն արդեն գիտեն, որ կան տեքստեր, երտեղ հիմնականում պատմվում է դեպքերի, հերոսների արարքների մասին։Այդպիսի տեքստերը կոչվում են պատմողական։ Հանդիպում են տեքստի այդ տեսակին՝ հեքիաթներում, պատմվածքներում։

Նկարագրական տեքստերում հիմնականում նկարագրվում են մարդիկ բնությունը, առարկաները։

Նկարագրման քայլերը՝

- Առարկայի (մարդու) ընդհանրացված գնահատումը։
- Առարկայի նկարագրությունը։
- Առարկայի էական կոնկրետ հատկանիշները։
- Առարկայի դերը, նշանակությունը նկարագրողի համար։

Օրինակներ ՝

1. Թևավոր մեղուներից կրետը գիշատիչ է։Վերին շրթունքը երկար է, աչքերը՝ խոշոր։ՈՒնի երկար կնճիթ, որով փորում է հողը, ավազաթումբը և բույն դնում։

Ավազաթմբից դուրս գալիս բնի անցքը փակվում է, բայց կրետը այն չի կորցնում, բնազդով գտնում է։Սնվում է ճանճերով։ Կրետը վնաս է հասցնում մեղուներին։

2. Մայիս ամիսն էր։Գարունն իր հրաշալիքներին էր փռել աշխարհի վրա։Վարդահոտը թեթև զեփյուռի շնորհիվ ամեն կողմ հետդ ման էր գալիս ։Լեռ ու դաշտ կանաչով է զարդարվել։ Հազարավոր երփներանգ ծաղիկներերեսիդ ծիծաղում են։Քարափների ծեպերից էլ կյանք է բուրում։

3. Իմ ընկերուհին լավ մարդ է։ Նա բարեհամբույր ու գեղոցիկ աղջիկ է։Ընկերուհիս աշխատասեր է, նպատակասլաց։Նրա աչքերում միշտ թախիծ կա, իսկ շուրթերին՝ քնքուշ ժպիտ։Ես առանց իմ ընկերուհու չեմ կարող ոչ մի քայլ անել։ Նա իմ խորհրդատուն է, օգնականն ու պահապանը։

Դատողական տեքստերում հիմնականում բացատրվում են դեպքերի, երևույթների պատճառները, ապացուցվում է ինչ-որ բան։Այս տիպի տեքստերը ունեն աբլ կառուցվածք։Նախ տրվում է այն միտքը, որը պիտի ապացուցվի, ապա ներկայացվում է ապացուցման, բացատրության հատվածը, վերջում՝ եզրակացությունը

Օրինակ՝ «Ինչ զարմանալի աշխատասեր և շարժուն արարածներ են ծիծեռնակները։Ես հաճախ եմ մտորում, որ նրանք էլ մտածել գիտեն։ Այլապես ինչպես բացատրել այն հանգամանքը, որ նրանք ցեխ ու շյուղ են կրում ու բույն հյուսում։Նրանց արարքներն էլ մարդկանց արարքների նման են։ Երբ էգը ձվեր է ածում ու թուխս նստում, արուն կերակրում է նրան, շոյում, փայփայում ու նորից սլանում դեպի երկինք։

Իսկապես, զարմանալի արարածներ են ծիծեռնակները»։

Այս տիպի տեքստերի հետ աշխատանքները հարմար ու հեշտ է կատարել չորրորդ դասարանում։ Դատողական տեքստը դժվար չէ երեխայի առօրյա մտցնել։ Դասերը վերլուծելիս կարողանում են դատողություններ անել, սեփական կարծիք մշակել, հիմնավորել, պատճառաբանել։ Այլ կերպ ասած՝ քննադատական մտածողություն է ձևավորվում։ Այս համատեքստում երեխաները «ընկերանում» են ինչու՞ հարցի հետ :

Հակիրճ՝ գնահատող խոսքի մասին։

Գնահատող խոսքը կապված է զգացմունքային ոլորտների հետ։ Տարբերվում է գնահատման երկու տեսակ։

- Մտածողության տրամաբանական կողմով պայմանավորված գնահատում
- Զգացմունքները, հոգեկան հուզումները ներկայացնող գնահատում։

Սրանցով էլ պայմանավորված՝ իբրև գնահատող խոսք օգտագործվում են տարաբնույթ չափազանցություններ, փոխաբերություններ, որոնք լավագույնս արտահայտում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը։ Օրինակ՝ հսկա կառուցվածքով մարդուն կարող են անվանել փիղ, փոքրամարմնին՝ մուկիկ, խորամանկին՝ աղվես, թաքնվածին՝ խլուրդ և այլն։

Առաջին դասարանից սկսած սովորողների ծոսքային վարքի կուլտուրա է մշակվում։Արտահայտվելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն, պահանջմունք ունի երեխան։Մտնելով խոսակցության մեջ՝ յուրաքանչյուր խոսող ունենում է որոշակի նպատակներ. մի բան հաղորդել, որևէ հարցի մասին կարիքք հայտնել, մի բան հարցնել, խնդրել և այլն։ Մենք գիտենք, թե ում է ուղղված մեր խոսքը։ Ունկնդիրն էլ ունի իր հիմնական մտադրությունը՝ տեղեկատվություն ստանալ, հասկանալ, թե ինչ է ուզում խոսակիցը։ Խոսքային գործունեությունը երկկողմանի գործընթաց է։Անհրաժոշտ է աշակերտների մեջ նպատակասլաց կերպով մշակել ուրիշի մտքերը ընկալելու ունակություն, այսինքն՝ հանդես գալ ոչ միայն որպես խոսող, այլև ունկնդիր, ընկալող, խոսքի հասցեատեր։Խոսքային վարքը կարող է շատ բան ասել շփվողների, նրանց կրթության, դաստիարակվածության մասին։Արդյունավետ շփվելու համար սովորողը պետք է ծանոթ լինի հաղորդակցական իրավիճակներին։Հաղորդակցական իրավիճակի բաղադրիչներն են.

- Ով՞ է ասում։Ի՞նչ է ասում։
- ՈՒ՞մ է ասում (հաղորդակցվողներ, զրուցակիցներ, գործընկերներ)։
- Ինչի՞ մասին է ասում (Խոսքի բովանդակությունը)։
- Ե՞րբ է ասում (նպատակը, խնդիրը, մտադրությունը։
- Ե՞րբ է ասում։
- Ինչպե՞ս է ասում։

Խոսքային իրավիճակներ կան դասագրքերի հեքիաթներում, պատմվածքներում, բանաստեղծություններում։

Ո՞վ, ու՞մ, Ի՞նչ և ինչու՞ ասաց հարցերին հեշտությամբ պատասխանում են, գծում հաղորդակցության սխեմաներ։

Մարդը կյանքում բազմաթիվ ու բազմազանսոցիալական դերեր է կատարում, որոնք էլ թելադրում են նրա հաղորդակցական վարքը։Երեխան տանը, դպրոցում, հասարակական վայրերում տարբեր դերերով է հանդես գալիս։Շատ կարևոր է օգնել երեխաներին հասկանալ, տարբերակել իրենց սոցիալական և դրանցով պայմանավորված նաև բուն հաղորդակցական դերերը, ինչպես նաև յուրաքանչյուր դերին և հաղորդակցական իրավիճակին համապատասխան վարքիագիծ դրսևորել։այդ խնդրի լուծման նպատակով կատարում են առաջադրանքներ, օրինակ 1-2-րդ դասարաններում՝

Ո՞վ եմ ես

1. Ընտանիքում

*մայրիկի ու հայրիկի համար՝ որդի կամ դուստր

*տատիկի ու պապիկի համար՝ թոռնիկ

*քույրիկի համար (կամ եղբոր) եղբայր (քույր) և այլն։

2. Դպրոցում

*Ուսուցչի համար

*ընկերներիդ համար

3. Ավտոբուսում, խանութուն, գրադարանում, հիվանդանոցում

Ուսուցչի օգնականը աշխատանքնային տետրն է։

Հաղորդակցությունը, շփումը երկկողմանի գործընթաց է։ Շփվողները տարբեր դերեր են կատարում։ Մեկն ասում է, մյուսը՝ լսում, մեկը տեղեկություն է հաղորդում, մյուսը՝ տեղեկությունն ընդունում է և այլն։3-4-րդ դասարաններում աշակերտներին ներկայացվում են ասացվածքներ՝ առաջարկելով պատկերացնել, թե ով, ում և երբ, ինչ իրավիճակում կարող էր ասել այդ խոսքերը ։Օրինակ՝

1Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հազար ու մին։

Ո՞վ (հաղորդող). . . մայրիկը, հայրիկը, ուսուցիչը. . .

Ո՞ւմ (ստացող). . . երեխային, աշակերտին. . .

Ե՞րբ. . . առաջադրանքը չկատարելու, խորհուրդը չլսելու դեպքում։

2. Ով աշխատի, նա կուտի։

Ո՞վ (հաղորդող). . . ուսուցիչը, մայրիկը, պապիկը. . .

Ո՞ւմ (ստացող). . . երեխային, աշակերտին. . .

Ե՞րբ. . . երբ չի աշխատել, գործ չի արել. . .

Իսկ ինչպե՞ս խոսել մարդու հետ, երբ նա կողքիդ չէ (հաղորդակցում տարածության մեջ)։

Սովորողները տարաբնույթ առաջադրանքներ են ստանում, օրինակ՝

*Երբ մեծերը տանը չեն, իսկ ինքը պետք է տանից դուրս գա։ Ինչպե՞ս կարող է տեղյակ պահել նրանց։

Մշակվում են գրավոր և բանավոր տարբերակներ.

*զանգահարել և հայտնել հեռախոսով (բանավոր)

*հաղորդագրություն ուղարկել ինքնապատասխանիչին (բանավոր)

*գրություն թողնել սեղանին (գրավոր)

*հաղորդագրություն ուղարկել բջջայինին (գրավոր);

Թվարկվում են բանավոր և գրավոր խոսքին աենչվող տարբեր առարկաներ.

Ձայնագրիչ, տեսագրիչ, խոսափող, հեռախոս, համակարգիչ, գրիչ, մատիտ։

2-րդ դասարանից սկսած երեխաները սովորում են հրավիրատոմս, հեռագիր, հայտարարություն գրել։

*Ինչպես խոսել մարդու հետ, երբ նա կողքիդ չէ, քեզանից առաջ է ապրել կամ հետո է ապրելու (հաղորդակցում ժամանակի մեջ)։Այս հարցում մեզ օգնության են գալիս հեքիաթները, որոնք կարդացել են նաև իրենց ծնողները, երբ փոքր են եղել։Այսինքն՝ գրողները գրել են տասնյակ հարյուրավոր տարիներ առաջ, իսկ մենք այսօր նրանց հետ հաղորդակցվում ենք։ Գրավոր խոսքը մեզ հնարավորություն է տալիս հաղորդակցվել նաև ժամանակի մեջ։

Այս աշխատանքները կատարելով հարկավոր է հասնել նրան, որ աշակերտները գիտակցեն, թե յուրաքանչյուր մարդու կյանքում որքան կարևոր են շփումը, որևէ լուր հաղորդելը, զրուցելը, հետաքրքիր պատմելը, հումորով խոսելը, որևէ առիթով ջերմ խոսքեր ասելը կամ գրելը, վեճի ժամանակ խոսքով պաշտպանվելը, վեճը խոսքով վարպետորեն հարթելը։

Շփումն ու հաղորդակցումը կարող են լինել նաև

Գլուխ 2

Խոսքային կամ ոչ խոսքային հաղորդակցություն։

Ոչ խոսքային հաղորդակցության իմ փորձը ներկայացնեմ դասապլանով։

(Տես բաց դասի նկարահանումը)։

Ամիս, ամսաթիվ՝

Առարկան՝ Խոսքային հաղորդակցում

Դասարանը՝ 111

Դասի թեման՝ Ոչ խոսքային միջոցներով հաղորդակցում (դիմախաղ, ժեստեր, մնջախաղ)

Դասի նպատակները՝

ա)ակադեմիական

*Սովորեցնել տարբերակել, տեղին ու արդյունավետ օգտագործել շփման ու հաղորդակցության տարբեր ձևերը։

*Ցույց տալ, որ մտքեր, ասելիք, հույզեր ու զգացմունքներ հաղորդում և ընկալում ենք ոչ միայն բառերով։

*Սովորեցնել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները։

*Սովորեցնել դերախաղով ասելիքը արտահայտել ոչ խոսքային միջոցներով՝ դիմախաղով, ժեստերով, մնջախաղով։

*զարգացնել բանավոր խոսքը, համադրելու, հակադրելու կարողությունները։

*Խթանել երևակայությունը, զարգացնել ստեղծագործական ունակությունները։

բ)սոցիալական

*Բարեկիրթ շփման, մշակույթի սկիզբ դնել։

*Ձևավորել բարեկիրթ շփման, հաղորդակցության կանոնոր ու հմտություններ։

*Բարեկիրթ շփման ավանդույթ ձևավորել։Այն դարձնել բոլոր դասերի ու ամենօրյա շփման խնդիր։

Անհրաժեշտ նյութեր

*Նկարներ, նկարազարդումներ։

*Նկարելու պարագաներ, թղթեր

*Բեմական հագուստներ կամ դիմակներ

*Գնահատտելու, խրախուսելու տարբերանշաններ (ժպիտիկներ)։

Ընթացքը

1. Խթանում

*Ողջույն։Դասի թեմայի հաղորդում։

*Տնային հանձնարարության ստուգում։

*Առաջին և երկրորդ դասարաններում անցածի կրկնություն։

Եզրակացություն։

2. Իմաստի ընկալում

*Ժպիտի խորհուրդը։

*Փոքրիկ ժպիտիկի այցը։»Խոսող» դեմքը։

*Առանց բառերի մխիթարանք։Աշխատանք գրատախտակին գրվաց բառերի ու արտահայտությունների շուրջ։

*Դերախաղով, օրինակ՝ ցույց տալ (առանց բառերի), որ Կկուն տխուր է, ուրախ է, Ագռավը՝ զարմացած ՝, վախեցած է, զայրացած է, Աղվեսը՝ հիացած, վախեցած, հիասթափված է։

Դերախաղով ներկայացնել մի հատված՝ առանց բառերի։Լսվում է միայն հեղինակի ձայնը։

Տ-աձև աղյուսակ (քննարկում)

Մխիթարել- այո, ոչ, ե՞րբ, ինչու՞

Չմխիթարել-այո, ոչ, ե՞րբ, ինչու՞

*Տեղեկություն ժեստերի մասին։ Ինչ է մնջախաղը։

*Խաղեր «Մնջախաղ», »Թարգմանիչներ»։

*Առանց խոսքի նկարների շարքի վերլուծություն։

Տեղեկություն ծաղրանկարների մասին։

*Առանց խոսքի ցուցանակներ։ Գուշակել՝ ինչ հաստատություն ենք մտնելու։

3.Կշռադատում

ա)Անդրադարձ։ Հարցեր

Ժպիտիկի հանձնարարությունը։

1. Դասապատրաստում նկարել դասից ստացած տպավորությունների շուրջ (ծաղրանկարներ, ցուցանակներ)։

2. Տանը հորինել հեքիաթ «Կորած ժպիտը» թեմայով։

գ. Գնահատել բոլորին։

Հաղորդակցության կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու ունակությունը։Արդյունավետհաղորդակցությունը ենթադրում է ոչ միայն ճիշտ, տեղին, հետաքրքիր, դիպուկ խոսել, այլ նաև լսել, ունկնդրել, ընկալել, հասկանալ այն, ինչ ասում է զրուցակիցը, այսինքն՝ դառնալ ակտիվ ունկնդիրներ։Երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել նաև ակտիվ լսել, այսինքն՝ արձագանքել զրուցակցի խոսքերին, իր խոսքը կառուցել նրա ասածի վրա։

Ունկնդրումը ենթադրում է մի շարք հիմնական կարողություններ.

- Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը,
- Դուրս բերել իրեն անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը
- Հասկանալ և ամբողջապես ըմբռնել բովանդակության մանրամասները։

Շատ կարևոր է բացահայտել.

ա) ունկնդրման նպատակը։Անհրաժեշտ է սովորեցնել ուշադիր լսել, լինել ակտիվ ունկնդիրներ։Կարդացած, լսած նյութերից ընտրել երկխոսություններ, առաջարկել որորշեն.

- Ո՞վ է խոսում,
- Ո՞վ է լսում,
- Ի՞նչպես է լսում,
- Ի՞նչու, ի՞նչ նպատակով է լսում (նոր, հետաքրքիր բան իմանալու, դիմացինին օգնելու, սեփական վերաբերմունքն արտահայտելու, տեղեկատվություն ստանալու, որոշու կայացնելու և այլն)։

բ)Սովորեցնել հասկանալ ունկնդրած տեքստը։

- Որոշել տեքստի թեման։
- Որոշել տեքստի հիմնական գաղափարը։Գլխավոր ասելիքը։Այս տեսանկյունից հրաշալի նյութ կարող են լինել առարկաները։

գ)Սովորեցնել ունկնդրելիս հարցեր տալ լավ չհասկացածի կամ չընկալածի մասին։

դ)Սովորեցնել ունկնդրելիս ուշադրություն դարձնել տեղեկատվությանը, որ ստանում ենք ոչ խոսքային միջոցներով (ձայնի. հնչերանգ, դիմախաղ, շարժումներ, կեցվածք և այլն)։

ե)Ստուգել բանավոր խոսքն ունկնդրելու, ընկալելու և մտապահելու կարողությունները։

Այս նպատակով կարելի է ընտրել որևէ տեքստ, առաջարկել ունկնդրելուց հետո կատարել հետևյալ առաջադրանքները։

- Վերնագրել։
- Դարձնել երկխոսություն։
- Հարցեր մտածել։Հարցեր, որոնք կտային պատմության հերոսին, եթե հանդիպեին։
- Շարունակել կամ ավարտել ունկնդրած անավարտ պատմությունը։
- Նկարագրել կամ դերերով խաղարկել այն, ինչ կարող էր տեղի ունեցած լինել մինչև պատմությունը կամ տեղի ունենա դրանից հետո։
- Մեկ նախադասությամբ ամփոփել։
- Ընտրել առած կամ ասացվածք, որը կարող է դիպուկ բնութագրել իրավիճակը։
- Արտահայտել վերաբերմունքը կամ կարծիքը։
- Նկարագրել պատմության այս կամ այն հերոսին։

Տարրական դասարաններում բարեկիրթ շփման մշակույթի սկիզբ է դրվում։

Բարեկիրթ շփման կարողությունների զարգացումը, հղկումը և ավանդույթի ձևավորումը բոլոր դասերի և ամենօրյա շփման խնդիրներ են։

Բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդրի լուծում է ենթադրում։

- Տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը,
- Իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ,

- Կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան:

Ներկայացնեմ դասապլաններ այն մասին, թե ինչպես են իրականցնում «Խոսքայիին վարքաձևեր. բարեկիրթ հաղորդակցում» դասարանում թեման 111 դասարանում:

Դասապլաններ

Առարկան՝ Մայրենի:Խոսք և հաղորդակցություն

Դասարանը՝ Չորրորդ

Դասի թեման՝ Խոսքային վարքաձևեր, բարեկիրթ հաղորդակցում:

Ուսուցիչը՝ Սվետիկ Եփրեմյան

Դասի նպատակը՝

1. Սովորեցնել

- Տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը.
- Իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ.
- Կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան.
- Իրավիճակին համապատասխան փոքրիկ բեմականացումների միջոցով առավել կոնկրետ և տեսանելի ներկայացնել բարեկիրթ հաղորդակցումը:

2. Ձևավորել բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողություններ ու հմտություններ:

3. Ամրակայել բարեկիրթ խոսքի, բարեկիրթ վարքի հմտությունները:

4. Զարգացել բարեկիրթ շփման կարողություններ:Հղկել այդ կարողությունները և ավանադույթ ձևավորել:

Անհրաժեշտ նյութեր

1. Նկարներ, նկարազարդումներ

2. Նկարելու պարագաներ, թղթեր

3. »Շունն ու կատուն» և «Չարի վերջը» ստեղծագործությունները:

4. Դիմակներ, բեմական հանդերձանք:

1 դասաժամ

1.Խթանում

Ընթացքը

Ի՞նչ՝ բարեկրթությունը։ Լսել սովորողներին։

Ավելացնել սովորածին 6 կանոն։

2.Իմաստի ընկալում

ա)Կրկնել առաջին և երկրորդ դասարաններում անցածը։Թվարկել ողջույնի և բարևի խոսքերը, բառերն ու արտահայտությունները։

- Ի՞նչպես են բարևում կենդանիները։
- Ի՞նչպես են ողջունում և հրաժեշտ տալիս։
- Ի՞նչպես ենք բարևում օրվա տարբեր ժամերին։

բ)Հիշել անցած հեքիաթներում, պատմություններում հանդիպած թղջույնի և բարևի տարբերակները, որոնք նախապես գրված են գրատախտակին։

գ)Սովորեցնել տարբերակել, թե դրանցից որը ում, որբ, որտեղ, ինչ իրավիճակներում կարող են ասել։

դ)Կարդալ «Շունն ու կատուն» ստեղծագործությունը։

- Հանձնարարություն զույգերին
- Հերուսնորը երբ են բարեկիրթ, իսկ երբ՝ ոչ։

3. Կշռադատում

Հարցերով ամփոփել։

Կարդալ տալ Թումանյանի «Չարի վերջը» ստեղծագործությունը։(Լուռ ընթերցանություն)։

Հանձնարարել

ա) Տանը պատրաստվել դերախաղի (դուր եկած դրվագը)։

բ)Նկարել մի դրվագ

գ)Գտնել հատվածներ (ցանկությամբ), որոնք արտահայտում են՝

- հրաման
- պահանջ
- խնդրանք
- աղաչանք

- հարցում
- հանդիմանանք
- սպառնալիք
- երազանք

Երկրորդ դասաժամ

1.Խթանում

Տնային հանձնարարության ստուգում։ Հարցերով կրկնել առաջին ժամի սովորածը։

ա)Յուրաքանչյուրը պատմում է իր նկարած դրվագը։

բ)Գտած հատվածները ներկայացնել դերախաղով, պարզել երբ են բարեկիրթ, երբ՝ ոչ։ Լսել հիմնավորումները։Ուշադրություն դարձնել ձայնի ինտոնացիային։

2. Իմաստի ընկալում

Զույգերով աշխատանք

ա)Խնդրանքը դարձնել աղաչանք կամ հրաման, պահանջը՝ խնդրանք։

բ)Ստեղծել երկխոսությունների հաղորդակցության սխեմաներ։

*Կարևորել «Ինչպե՞ս»-ը։

*Պարզել բարեկի՞րթ է հերոսը, կոպտու՞մ է , նեղացնու՞մ է և այլն։

3. Կշռադատում

1. Լսել խմբերին, ամփոփել ախատանքները։

2. Անդրադարձ՝ սովորածին։ Հարցեր։

3. Ինքնուրույն աշխատանք։

*Գրել նամակ Կկվին, Աղվեսին, Ագռավին՝ ցանկությամբ։

Խորհուրդներ տալ, մխիթարել։

Նախապես սովորեցնել՝ ինչպես բարեկիրթ ձևով մխիթարել, ցավակցել (գրել գրատախտակին)։

4. Ստուգել ինքնուրույն աշխատանքները և գնահատել։

5. Տնային հանձնարարություն։Նամակները շարունակել տանը։

Մտածել՝

*Հնարավո՞ր է արդյոք, մխիթարել առանց բառերի։

*Ինչպե՞ս։ Գրառել և ներկայանալ հաջորդ դասին։

Եզրակացություն

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը կարևոր են աշակերտների խոսքի զարգացումը, մասնավորապես՝ հաղորդակցական կառողությունների ձևավորման խնդիրները: «Մայրենի» առարկայի նպատակն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Կապակցված խոսքի կառուցման հմտությունների ձևավորումը, բառապաշարի հարստացումը, աշակերտների խոսքի լեզվաքերականական կառուցվածքի մշակումը պետք է ծառայեն այս գլխավոր նպատակին՝ մայրենիով գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառույթային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

Մայրենիի առարկայական ծրագրերի ժամանակակից ուղղվածությունը աշակերտների խոսքային զարգացման հարցերում՝մղում են մեթոդական նոր որոնումների:Խոսքի զարգացումը, ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը, լրացվում է մեկ այլ խնդրով, ձևավորել այնպիսի անձ, որը տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, տեղեկատվության, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցել այդ իրադրությանը համապատասխան: Այսինքն՝ արդյունավետ հաղորդակցվել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գ. Թերզյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան «Խոսք և հաղորդակցություն»
2. Մեթոդական ձեռնարկ տարրական դասարանների ուսուցիչների և ծնողների համար: Զանգակ հրատարակչություն, Երևան, 2013:
3. . Կ. Թորոսյան, Գ. Թերզյան, Հ. Խաչատրյան «Խոսք և հաղորդակցություն»:
4. Մեթոդական ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար: Երևան, 2011:
5. Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր:
6. Հանրակրթության պետական չափորոշիչ:
7. 2015-16 ուսումնական տարում տարրական դպրոցի նորությունների և կրթական գործընթացի կազմակերպման բարեփոխման վերաբերյալ մեթոդական նամակը:
8. Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան. Մայրենի 2-4 ուսուցչի ձեռնարկ:Երևան 2013:
9. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան , Ա. Բալայան «Գնահատման նյութերի ժողովածու, բանավոր հարցում 2-րդ դասարան (3-րդ և 4-րդ): Հրազդան 2010թ. :
10. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ս. Մուսայելյան «Գնահատման նյութերի ժողովածու. թեմատիկ գրավոր աշխատանքներ. արտագրություն, թելադրություն, փոխադրություն, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններ»: Հրազդան 2010:
11. Ա. Հ. Ասլանյան «Հայոց լեզվի ուսուցման հարցեր» Երևան «Լույս, հրատ. 1988թ. »: